Հավելված N 418
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԱՏՄ ԵՎ ԱՊՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) ԵԱՏՄ և ԱՊՀ համագործակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետի (ծածկագիրը՝ 23-32.11-Մ4-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ մասնագետը

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության աշխատանքներին,
2. մասնակցում է միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքներին,
3. մասնակցում է միջազգային տնտեսական ինտեգրման կարգավորման աշխատանքներին,
4. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքներին,
5. մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքներին,
6. մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքներին,
7. մասնակցում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ Նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման

աշխատանքներին,

8. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպման աշխատանքներին,
9. մասնակցում է եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքներին,
10. իրականացնում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի, հուշագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակման աշխատանքները,
11. մասնակցում է Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի տրամադրման աշխատանքներին՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
12. մասնակցում է արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրման աշխատանքները՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
13. մասնակցում է երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի նախագծերում ընդգրկված յուրաքանչյուր բաժնի մասով /համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ/ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպման աշխատանքներին,
14. մասնակցում է ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցային փուլերի ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ներկայացման աշխատանքներին,
15. իրականացնում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակման աշխատանքները՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում:

Իրավունքները՝

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման համար շահագրգիռ մարմիններից և Նախարարության կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- ստանալ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների արդյունավետ իրականացման վերաբերյալ շահագրգիռ մարմիններից և գերատեսչություններից համապատասխան տեղեկատվություն,
- մասնակցել Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության

շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի մշակման և դրանցից բխող միջոցառումների հետ կապված շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների հետ խորհրդակցություններին և քննարկումներին,

- ընդգրկվել ներքին շուկայի գործառնության շրջանակներում փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտման և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել միջազգային /տարածաշրջանային/ տնտեսական կառույցների և միությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին աջակցության աշխատանքների համակարգման և իրականացման նպատակով, համապատասխան մարմիններից ներկայացված անհրաժեշտ հիմնավորումները, կարծիքները և այլ նյութերը, ներկայացնել եզրակացություն, առաջարկություն,
- ուսումնասիրել և վերլուծել միջազգային տնտեսական ինտեգրման քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, տեղեկանքները և այլ անհրաժեշտ նյութերը, կազմել հաշվետվություններ,
- ուսումնասիրել և վերլուծել համապատասխան մարմիններից ներկայացված անհրաժեշտ հիմնավորումները, կարծիքները և այլ տեղեկատվությունը՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների իրականացման վերաբերյալ,
- ներկայացնել առաջարկություններ բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման հեռանկարային և առկա շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ միջոցառումների իրականացման հետ կապված աշխատանքներին մասնագետներ և փորձագետներ ներգրավելու վերաբերյալ
- ներկայացնել առաջարկություններ՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝
- ամփոփել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման համար շահագրգիռ մարմիններից և նախարարության կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը և նյութերը,
- մշակել և նախապատրաստել ՀՀ մրցունակ ապրանքների ցանկը՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում,
- մասնակցել արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների վերլուծության և կազմման աշխատանքներին՝ ԱՊՀ համագործակցության

շրջանակներում,

- ուսումնասիրել և վերլուծել հայրենական ապրանքների մրցունակության և ներկայացվածության հետ կապված համապատասխան շուկաները՝ ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում,
- ամփոփել և ուսումնասիրել ԱՊՀ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների իրականացման վերաբերյալ շահագրգիռ մարմիններից և գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը և նյութերը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության ***և*** մասնագիտական օժանադակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: